

րասին սա է, որ հազիւ ներս մտած՝ կը գրաւէ մեր ուշը: Այդպէս էր իւր սովորական կոչումն ալ (Մանդ. 205. Եղիշ. 132. Մեսր. 32, 39), զոր Ստ. Որբելեան կ'ախորժի կոչել յունարէն ձայնով «գտրապեզն մարմնաւոր սեղանոյն» (230), խօսելով վանականաց մասին: Ասոր իսկական ձեւին որ եւ է նշմար չեմ գտած երիցագոյն դարերէն: Բայց կրնանք երեւակայել զայն լայն ու քառակուսի, ինչպէս էր յառաջագոյն Յունաց եւ Հռովմայեցոց քով (Գար. Ա, 1273-4, '78), եւ կամ բոլորակ՝ ինչպէս եղաւ հռովմ. կայսերութեան շրջանին (անդ, 1279): Անոր ընդհանուր՝ բայց կարեւոր գաղափար մը կու տայ մեզ Մանդակունին, երբ խօսելով ազապի մասին, ուր հարուստ եւ աղքատ միասին կը ճաշէին, կ'ըսէ. «Նոքա մեծարանօք ի վեր, եւ Քրիստոս (այս ինքն աղքատք) արհամարհանօք ի խոնարհ. նոքա պատուով ի բազմականի, եւ Քրիստոս արհամարհանօք առ պատուանդանի» (61): Այս տեղ ուրեմն ազնուականաց սեղանն ու բազմոցը բարձրը են, մինչդեռ աղքատները գետնի վրայ կը նստին, եւ ուր յայտնի է երկու դասակարգաց առանին սեղանոց ալ տարբերութիւնը: Ոսկերերանի աղքատներն եւս բազմական չունէին (Թղթ. Ա, 530): Գալով